

### 4.3. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման աշխատանքները, ի թիվս պետական վիճակագրական հաշվետվությունների միջոցով հավաքագրվող տեղեկատվության, օգտագործելով նաև համապատասխան ոլորտի վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի (մաքսային վիճակագրության մասով), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության կողմից ներկայացվող համապատասխան տեղեկանքներում ներառված տվյալները:

Վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի վերաբերյալ ցուցանիշների հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի» 5-րդ հրատարակության ձեռնարկով սահմանված միջազգային, իսկ արտաքին առևտրի վիճակագրության վարման համար՝ Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի մեթոդաբանության սկզբունքներն ու հասկացությունները: Հաշվի առնելով միջազգային մեթոդաբանությամբ երաշխավորվող և վճարային հաշվեկշռում ներառման ենթակա՝ դեսպանատներում տեղացի աշխատողների աշխատավարձի, այլ ծախսերի, հատուկ ֆինանսավորման և տեխնիկական օգնության մասին տվյալների հավաքագրման համար ուղղակի վիճակագրական գործիքների կիրառման խնդրահարույց լինելու հանգամանքը, նշված հաշվարկների իրականացման համար, մշակվել, ներդրվել ու կիրառվում են փորձագիտական գնահատականների մեթոդները, վերջիններս համալրելով Ծառայության, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ընտրանքային հետազոտությունների արդյունքներով:

Յուրաքանչյուր եռամսյակի վերջի դրությամբ հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի և արտաքին ակտիվների վերաբերյալ ցուցանիշներն՝ ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Եռամսյակային կտրվածքով մշակվել և հրապարակվել է օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ երկրների, գործունեության, գործունեության ոլորտ-երկիր բաշխվածության կտրվածքների:

Ջրոսաշրջությունը բնութագրող ցուցանիշների ամբողջականության, ինչպես նաև առանձին ցուցանիշների առումով համապատասխան մանրամասնեցվածության ապահովման նկատառումներով պայմանավորված, Ծառայությունը (հետազոտության մեթոդաբանական ապահովման, տվյալների բազաների և աշխատակազմի մասնագիտական կառավարման մասով)՝ Ջրոսաշրջության զարգացման հայկական գործակալության և Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրի համագործակցությամբ, 2006թ. սեպտեմբեր

ամսից իրականացնում է ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտությունը՝ հանրապետության բոլոր սահմանային անցման կետերում (հետազոտության տևողությունը՝ 6 ամիս):

Արտաքին առևտրի վիճակագրության մեջ ապրանքների դասակարգման միջազգային ստանդարտների ներդրման և կիրառվող դասակարգիչների միջև «անցումների» ապահովման նկատառումներով պայմանավորված համապատասխան տվյալներն ամփոփվում (խմբավորվում) են մաքսային վիճակագրությունում կիրառվող՝ Ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգի երկնիշ և քառանիշ, ինչպես նաև Համակցված անվանացանկի ութանիշ դասակարգմամբ, որոնք այնուհետ փոխարկվում են Առևտրի միջազգային ստանդարտ և Ընդլայնված տնտեսական դասակարգիչների (3-րդ վերանայված տարբերակ):

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրի վերաբերյալ տվյալների հավաքագրումն իրականացվել է 2005թ.-ից գործողության մեջ դրված «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով:

«Հայելային» վիճակագրության վարման մասով աշխատանքների իրագործումը պայմանավորված է երկու գործոններով՝ միջպետական համաձայնություններով և այդ աշխատանքների համար հատուկ, նպատակային ֆինանսավորմամբ: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի հիմնական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության հետ, երկու երկրների մաքսային մարմինների կողմից, արտաքին առևտրի ցուցանիշների «հայելային» վիճակագրության վարման ուղղությամբ աշխատանքների իրագործման վերաբերյալ: